Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՀԽ-1 (3)
2018թ.
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

2018թ. մարտի 30

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (այսուհետ՝ Նախարար), խորհրդի նախագահ Ա.Ասատրյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ

Թամարա Աբրահամյան	«Արազա» ԲՀԿ
Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ ՀԿ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ
Արթուր Սարգսյան	«Աշխատանքի իրավունքի պաշտպանի գրասենյակ» ՀԿ
Լիլիթ Քամալյան	«Հայաստանի համայնքների միություն» ԻԱՄ
Նաիրա Առաքելյան	«Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ
Աննա Եղիազարյան	«Հայկական կարմիր խաչ ընկերություն» ՀԿ
Գրիգորի Գրիգորյանց	«Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» Հայաստանյան ներկայացուցչություն
Արայիկ Հայրապետյան	Ֆիզիկական անձ
Աննա Մնացականյան	ֆիզիկական անձ
Սյուզաննա Բաղդոյան	ֆիզիկական անձ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարութուն)

Հրավիրված էին և մասնակցում էին՝

Արայիկ Պետրոսյան	Նախարարի առաջին տեղակալ
Սմբատ Սահյան	Նախարարի տեղակալ
Սոնա Հարությունյան	Նախարարի տեղակալ
Թադևոս Ավետիսյան	Նախարարի տեղակալ
Դավիթ Հակոբյան	Նախարարի խորհրդական

Անուշ Դանիելյան	Նախարարի մամուլի քարտուղար
Ժորա Սարգսյան	Նախարարության աշխատակազմի աշխատանքի և
Ռուզաննա Պեպանյան	զբաղվածության վարչություն
Արթուր Կեսոյան	Նախարարության աշխատակազմի հաշմանդամների և
Աննա Հակոբյան	տարեցների հիմնահարցերի վարչություն
Արփենիկ Հակոբյան	
Արամ Պետրոսյան	Նախարարության աշխատակազմի իրավական
Ռուզաննա Աբրահամյան	ապահովման բաժին
Գայանե Մանուկյան	Նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ
Նունե Շահվերդյան	Նախարարության աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պետի տեղակալ
Արտակ Մանգասարյան	Նախարարության աշխատակազմի Զբաղվածության պետական գործակալության պետ

Բացակայում էին՝
Խորհրդի անդամներ

Սուսաննա Թադևոսյան	«Հույսի կամուրջ» ՀԿ
Լալա Տեր-Ղազարյան	«Պանորամա ԷՅՄ» ՍՊԸ
Միրա Անտոնյան	«Երեխաների պաշտպանության ցանց» ոչ առևտրային ԻԱՄ
Մարինե Համբարձումյան	«Հայ օգնության միություն» ԲՀԿ
Շողինե Սողոմոնյան	«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ
Տիգրան Պետրոսյան	«Հայկական կարիտաս» ԲՀԿ
Աշոտ Քոչարյան	«Սօս մանկական գյուղեր» ԲՀԿ
Աիդա Մուրադյան	«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Բժշկասոցիալական փորձաքննության /այսուհետ՝ Փորձաքննություն/ ոլորտի բարեփոխումների ներկայացում և քննարկում
(ՀՀ ԱՍՀ նախարարի տեղակալ Ս. Սահյան)

2. Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց՝ շուրջօրյա խնամքի հաստատություններ ուղեգրման գործընթացների ներկայացում և քննարկում
(ՀՀ ԱՍՀ նախարարի տեղակալ Թ.Ավետիսյան)

3. Զբաղվածության պետական ծրագրերի արդյունավետության բարձրացման, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատող մայրերին աշխատանքի վերադառնալու աջակցության մեխանիզմների ներդրման,

գործազուրկի անմրցունակ ճանաչման դեպքերի հստակեցման և զբաղվածության ոլորտի մի շարք խնդիրների լուծմանն ուղղված ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում և քննարկում

(ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժ. Սարգսյան)

4. Այլ հարցեր

Մինչ օրակարգին անդրադառնալը՝ Նախագահը ողջունեց հասարակական խորհրդի անդամներին և անդրադարձավ նիստի օրակարգին:

Նիստի օրակարգի վերաբերյալ առաջարկություններ ու դիտողություններ չներկայացվեցին: Նիստի օրակարգը հաստատվեց միաձայն:

1. **Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտի բարեփոխումների ներկայացում և քննարկում**

Անցնելով օրակարգի առաջին հարցին՝ նախարարի տեղակալ Ս. Սահյանը ներկայացրեց համառոտ տեղեկատվություն բժշկասոցիալական փորձաքննության ոլորտի բարեփոխումների, գործող ընթացակարգի և առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ:

Նախարարի տեղակալը անդրադառնալով վերոնշյալ ոլորտում իրականացվող բարեփոխումներին՝ նշեց, որ ըստ գործող համակարգի հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական երաշխիքների համակարգի տրամաբանությունն անձանց մոտ արմատավորում է խնամառուի հոգեբանությունը: Այսինքն՝ հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունները (սոցիալական երաշխիքները) նույնական են՝ անկախ անհատական կարիքներից: Ինչի արդյունքում գործում է «հաշմանդամություն ունեցող անձին ամեն ինչ, իսկ հաշմանդամություն չունեցողին՝ ոչինչ» սկզբունքը և հաշմանդամությունը ընկալվում է որպես պետության կողմից տրվող «շնորհ», որը պետք է «ձեռք բերել» ամեն գնով:

Առաջարկվող ընթացակարգով նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձին տրամադրվող սոցիալական երաշխիքները փոխկապակցել ոչ թե հաշմանդամության խմբին, այլ անձի գնահատված կարիքներին, այսինքն՝ հաշմանդամություն ունեցող անձին տրամադրել ծառայություններ (սոցիալական երաշխիքներ)՝ ելնելով գնահատված կարիքից: Միաժամանակ, հնարավորություն է ընձեռնվում գնահատված կարիքի հիման վրա ծառայություններ մատուցել նաև անձանց, ովքեր չունեն հաշմանդամություն՝ նպատակ ունենալով վերացնել ամեն գնով հաշմանդամ ճանաչվելու մղումը:

Առաջիկայում նախատեսվում է նաև համակարգում ներդնել այնպիսի մեխանիզմներ, որոնք որոշակի վարքագիծ կպարտադրեն հաշմանդամներին:

Մասնավորապես, բժշկասոցիալական վերափորձաքննության նպատակով օգտաքարտը լրացնելու համար ևս պարտադիր պայման սահմանել վերջին անգամ օգտաքարտ ստանալուց հետո իրականացված ախտորոշիչ, բուժական և վերականգնողական միջոցառումների առկայությունը (այլ կերպ ասած՝ անձը չի կարող ենթարկվել բժշկասոցիալական

վերափորձաքննության, եթե հաշմանդամ ճանաչվելուց հետո չի բուժվել և չի ենթարկվել նոր բուժզննության):

Վերը նշված փոփոխություններն անմիջականորեն փոխկապակցված են առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումների (այդ թվում՝ սոցիալապես խոցելի խմբերի պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրման) հետ և կարող են կանխորոշել այդ բարեփոխումների արդյունավետ ընթացքը:

Բժշկասոցիալական փորձաքննության (այսուհետ՝ Փորձաքննություն) ընթացքում նախատեսվում է կիրառել Առողջապահության Համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգիչները (ԱՀԿ ՖՄԴ), որոնք հնարավորություն կընձեռեն հստակեցնել վերջինիս ժամանակ օգտագործվող՝ օրգանիզմի ֆունկցիաների խանգարումները և մարմնի ձևախեղումները բնութագրող դասակարգիչները:

Փոփոխություն է իրականացվելու նաև անձին Փորձաքննության ուղեգրման պայմանների ու կարգի մեջ: Գործող ընթացակարգի համաձայն անձը Փորձաքննության է ուղեգրվում 088 ձևի հիման վրա, ինչը բավարար տվյալներ չի պարունակում անձի առողջական վիճակի մասին: Սակայն նախատեսվող փոփոխության արդյունքում անձը բժշկասոցիալական փորձաքննության կուղեգրվի բժշկական հետազոտության օգտաքարտի հիման վրա, որը համապարփակ տեղեկատվություն կպարունակի անձի առողջական վիճակի վերաբերյալ:

Առողջապահական կազմակերպությունն օգտաքարտը տրամադրում է օբյեկտիվ զննության և առողջապահության միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգում առկա՝ ախտորոշիչ, բուժական և վերականգնողական միջոցառումների (այդ թվում՝ հետազոտությունների) վերաբերյալ տվյալների հիման վրա՝ հստակ սահմանված ընթացակարգերի համաձայն (ներառյալ՝ բողոքարկման կարգը):

Միաժամանակ, հստակեցվում են բժշկական հետազոտության օգտաքարտ տրամադրելու (Փորձաքննության ուղեգրելու) պայմաններն ու կարգը, հետևաբար՝ Փորձաքննություն իրականացնող հանձնաժողովի և առողջապահական կազմակերպության պատասխանատվության շրջանակը:

Մյուս կարևորագույն փոփոխությունը վերաբերում է հանձնաժողովների գործունեության ընթացակարգին: Ներկայումս հանձնաժողովի անդամների գործողությունների (իրավաչափության) վերաբերյալ բողոքների դեպքում երբեմն հնարավոր չի լինում վեր հանել օբյեկտիվ իրականությունը և տալ գնահատականներ: Այդ նպատակով առաջիկայում նախատեսվում է ձայնագրել (սղագրել) և տեսանկարահանել Փորձաքննության գործընթացը:

Ս. Սահյանը տեղեկացրեց նաև, որ ՀՀ ԱԺ-ի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի վերաբերյալ տեղի է ունեցել երկու հանրային քննարկում և վերջինիս լրամշակված տարբերակը ներկայացվելու է ՀՀ ԱԺ՝ երկրորդ ընթերցմամբ քննարկելու համար: Ինչը նշանակում է՝ արմատապես վերանայել հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ առկա վերաբերմունքը, որը նախկինում վավերացված միջպետական համաձայնագրի պահանջ է, որի շրջանակներում հաշմանդամությունը դիտարկվում է ոչ թե որպես առողջական խնդիր, այլ առողջական խնդրի սոցիալական հետևանք:

Ներկայացնելով բարեփոխումների կարևորությունն ու ընթացքը՝ Ս. Սահյանն ընդգծեց, որ իրականացվող գործընթացները միտված են Փորձաքննության օբյեկտիվության մակարդակի բարելավմանը, հաշմանդամության սահմանման չափորոշիչների հստակեցմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ու հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների հասցեականությանն ու այդ ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:

Բարձրացված հարցի վերաբերյալ Խորհրդի անդամների կողմից հնչեցին տարբեր հարցադրումներ, մտահոգություններ և առաջարկություններ:

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ ՀԿ-ի ներկայացուցիչ Մ. Թեմուրյանը հարցեր հնչեցրեց հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների հասցեականության և այդ ծրագրի արդյունավետության բարձրացումից ակնկալվող արդյունքները Խորհրդի անդամներին տրամադրված տեղեկանքի ամենավերջում տեղակայելու, անհատական և միջավայրային գործոններին չանդրադառնալու, ինչպես նաև ներդրված մեխանիզմների առկայության դեպքում առանց անձին զննության ենթարկելու հաշմանդամության խումբ սահմանելու վերաբերյալ:

Ս. Սահյանը պարզաբանեց, որ քննարկման ձևաչափը և օրակարգով նախատեսված ժամկետային սահմանափակումը հնարավորություն չի տալիս ավելի մանրամասն անդրադառնալու բազմաթիվ հարցերի, այդ թվում ֆունկցիաների միջազգային դասակարգիչների կիրարկմանը, դրանց նպատակներին և խնդիրներին: Միաժամանակ, անդրադառնալով տեղեկանքի ձևաչափին՝ նշեց, որ առանձնապես հերթականությունն առաջնահերթություն չի ենթադրում: Իսկ առանց անձին զննության ենթարկելու հաշմանդամության խումբ սահմանելու վերաբերյալ հարցին անդրադառնալով՝ նախարարի տեղակալը նշեց, որ այդ խնդրի լուծման նպատակով նախատեսվում է ներդնել փաստաթղթային Փորձաքննության ինստիտուտը, և օրինակի հիման վրա պարզաբանեց, որ եթե անձի սրունքը մեկ երրորդից անդամահատվել է, այս դեպքում առաջին տարին Փորձաքննության զննության արդյունքում անձին նշանակվում է 2-րդ խմբի հաշմանդամություն, որովհետև որոշակի ժամանակահատված է հարկավոր, որ օրգանիզմը համակերպվի այդ իրավիճակին, իսկ երկրորդ տարին արդեն սահմանվում է 3-րդ խմբի հաշմանդամություն: Այս պարագայում ցմահ խումբ սահմանելու համար հնարավոր է անձի նկատմամբ հերթական Փորձաքննություն չնշանակել:

Այնուհետև «Արազա» ԲՀԿ-ի ներկայացուցիչ Թ. Աբրահամյանը ներկայացրեց, որ տրամադրված տեղեկանքի վերաբերյալ էլեկտրոնային փոստով իր կողմից ներկայացվել են հարցադրումներ, միաժամանակ հարց ուղղեց Ս. Սահյանին կապված հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ամեն կերպ հաշմանդամության խումբ ստանալու ձգտման և ընդամենը 25 տոկոսի կողմից դրանից բխող անվճար բժշկական ծառայություններից օգտվելու անտրամաբանական կապի և զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց Փորձաքննության գործընթացի իրականացման ընթացակարգի վերաբերյալ, տեղեկատվության բացակայության պատճառների մասին:

Բարձրացված հարցերի առնչությամբ Ս. Սահյանը պարզաբանեց, որ անձանց կողմից հաշմանդամության խումբ ստանալու միտումը պայմանավորված է հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայությունների և սոցիալական երաշխիքների հետ:
Ինչ վերաբերում է զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց Փորձաքննությանը, ապա այն իրականացվում է ընդհանուր հիմունքներով, սակայն նրանց իրավական կարգավիճակով պայմանավորված առկա են որոշակի առանձնահատկություններ, տարբերություններ կան նաև հաշմանդամություն ստանալու պատճառական կապերով պայմանավորված:

Անդրադառնալով հաջորդ՝ Զբաղվածության գործակալության և Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության հենքի վրա ձևավորվող նոր գործակալության աշխատակազմի ձևավորման, աշխատակիցների պաշտոնների անձնագրերի հստակեցմանն ու ստեղծվելիք հաստիքակազմն անհիմն չծանրաբեռնելու վերաբերյալ հարցերին՝ Ս. Սահյանը պարզաբանեց, որ բնականաբար նոր ձևավորված գործակալության պարագայում կիրականացվեն կառուցվածքային փոփոխություններ և առաջացած յուրաքանչյուր նոր պաշտոնի համապատասխան այդ պաշտոնի անձնագրի ստեղծման հիմքով կորոշվի վերոնշյալ հաստիքները զբաղեցնող աշխատակիցների գործառույթները:

Խորհրդի անդամ Ա. Հայրապետյանը հարցրեց. Արդյո՞ք փորձաքննության ընթացքում բժշկական զննումը ամբողջությամբ տեսանկարահանվելու է: Ի պատասխան հարցադրմանը՝ Ս. Սահյանը նշեց, որ իհարկե Փորձաքննության ընթացքում մասնավորապես բժշկական զննման ժամանակ դրա տեսակից ու առանձնահատուկ դեպքերից կախված կլինեն իրավիճակներ, երբ տեսանկարահանումը չի իրականացվի, օրինակ կանանց կրծքի հետ կապված զննումները: Սակայն, Փորձաքննության գործընթացը հիմնականում տեսանկարահանվելու և ձայնագրվելու է: Հաջորդեց խորհրդի անդամի մյուս հարցը, այն է՝ եթե տեսանկարահանումը իրականացվելու է որոշակի ռիսկեր կանխարգելելու համար և զննման տեսակից ելնելով ոչ բոլոր զննումներն են նկարահանվելու, ապա ինչու՞ չի կիրառվում ՀՀ դատարաններում հաջողությամբ կիրառվող հատուկ ձայնագրառման համակարգը: Հարցին ի պատասխան Ս. Սահյանը շարունակեց, որ խոսքը գնում է առանձնահատուկ դեպքերի մասին երբ տեսանկարահանում չի իրականացվելու, սակայն Փորձաքննության գործընթացի շուրջ 95 տոկոսը նկարահանվելու է: Մենք հիմա մշակում ենք մեխանիզմներ, կարգեր ու պայմաններ այդ ամբողջ գործընթացի տեսանկարահանման փուլերը կարգավորելու համար և այդ նպատակով պատրաստում ենք նախարարի հրամանի նախագիծ:

Հարցի վերաբերյալ նախարար Ա. Ասատրյանը նշեց, որ մենք դեռևս կունենանք ժամանակ ու հնարավորություն այդ բոլոր հարցերը մանրամասն քննարկելու համար: Այս ընդհանուր գաղափարները մշակված են ու մեզ հայտնի են, բայց կան դետալներ, որոնք պետք է քննարկենք ու յուրացնենք: Այդ թվում, զննման գործընթացը տեսանկարահանելու և ձայնագրելու ընթացակարգերը ևս:

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» Հայաստանյան ներկայացուցչության անդամ Գ. Գրիգորյանցը կարևորելով Փորձաքննության ոլորտում իրականացվելիք բարեփոխումները՝ խնդրեց տեղեկատվություն տրամադրել վերոնշյալ փոփոխությունների իրականացման կամ

միջոցառումների ծրագրի կատարման ժամկետների վերաբերյալ, ինչպես նաև պարզաբանել հաշմանդամություն ունեցող երեխաներին հաշմանդամության խումբ սահմանելու առանձնահատկությունների և նրանց տրամադրվող ծառայությունների վերաբերյալ:

Բարձրացված հարցին ի պատասխան Ս. Սահյանը պարզաբանեց, որ ներկայացված բարեփոխումները նախատեսվում է կատարել ամիսների ընթացքում և նշեց, որ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված և ամրագրված ժամկետներում պատասխանատու կատարողների կողմից իրականացվելու են համապատասխան միջոցառումների ծրագրերը:

Անդրադառնալով հաշմանդամություն ունեցող երեխաներին տրվող սոցիալական երաշխիքներին, նշեց, որ հաշմանդամություն ունեցող երեխան սոցիալական երաշխիքների առումով նույնականացված է հաշմանդամության առաջին խումբ ունեցող անձի հետ, միաժամանակ նախատեսվում է երեխաների Փորձաքննության գործընթացին ներգրավել նաև հոգեբանամանկավարժական կենտրոնների, որոնք ներկայումս գործում են դպրոցում: Նշեց նաև, որ վերոնշյալ երեխաների դեպքում առաջնահերթությունը պետք է տրվի նրանց կրթական գործընթացներից դուրս չթողնելուն, թերևս երեխաների համար չկա ավելի լավ ծառայություն, քան կրթական ծառայություն տրամադրելն է և այդ պարագայում կարիքը գնահատվելու է վերոնշյալ կազմակերպության մասնակցությամբ: Միաժամանակ հավելեց, որ ֆունկցիաների միջազգային դասակարգիչների կիրառումը հնարավորություն է տալիս որոշակիացնել տրամադրվող ծառայությունների շրջանակը՝ ըստ անհրաժեշտության վերաձևավորելով կամ վերաձևակերպելով այդ ծառայությունները:

Կարևորելով Փորձաքննության ոլորտի բարեփոխումները՝ Նախարարը նշեց, որ այս բարեփոխումները ունեն 2 բաղադրիչ.

Առաջինը՝ բովանդակային, սա այն է, որ ներդրվելու է ՖՄԴ մեկ միասնական դասակարգիչներ և ոլորտի բարեփոխման արդյունքում ունենալու ենք մեկ միասնական լեզու՝ նոր դասակարգիչ, այսինքն՝ առողջապահության, սոցիալական պաշտպանության և կրթության ոլորտները հաշմանդամություն ունեցող անձի խնդրի շուրջ խոսելու են մեկ լեզվով և լուծում է տրվելու մարդու խնդրին, իսկ եթե տարբեր լեզվով են հարաբերակցվելու իրար հետ այս մարմինները, ապա մարդու խնդիրը կամ չի լուծվելու, կամ լուծվելու է թերի:

Բարեփոխումների երկրորդ բաղադրիչը դա Փորձաքննորության գործընթացն է՝ տեղեկատվության փոխանակում, ռիսկեր, պատասխանատվություն: Ահա թե ինչու նախատեսվում է կանոնակարգել բժշկասոցիալական փորձաքննության ամենատարբեր գործընթացները, հստակեցնել ինչպես համակարգի ներսում, այնպես էլ ընդհանուր՝ այլ համակարգերում յուրաքանչյուրի պատասխանատվությունը:

Հարցի քննարկումն ավարտելուց հետո Նախագահի առաջարկով Խորհուրդը որոշեց ի գիտություն ընդունել նախարարի տեղակալ Ս. Սահյանի կողմից ներկայացված զեկույցը:

Այնուհետև խոսքը փոխանցվեց նախարարի տեղակալ Թ. Ավետիսյանին:

2. Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց՝ շուրջօրյա խնամքի հաստատություններ ուղեգրման գործընթացների ներկայացում և քննարկում

Անցնելով օրակարգի 2-րդ հարցին՝ նախարարի տեղակալ Թադևոս Ավետիսյանը ներկայացրեց տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ու սպասարկման

հաստատություններ ուղեգրման գործընթացի բարեփոխումները: Նշեց նաև, որ վերոնշյալ գործընթացները պետք է լինեն հասկանալի և իրենց մեջ պարունակեն սոցիալական աշխատանքի ամբողջ էլեմենտը՝ սկսած կարիքի գնահատումից և դրա շարունակությունը շուրջօրյա խնամքի հաստատությունում: Նա նշեց, որ հիմքում ունենալով շուրջօրյա խնամք ցանկացող անձի սոցիալական կարիքի բազմակողմանի գնահատումը, պետք է նրան տրամադրել ամենատարբեր ծառայություններ, չկտրելով նրան ընտանեկան միջավայրից:

Անդրադառնալով նաև ընտանեկան օրենսգրքով նախատեսված ալիմենտի բռնագանձմանը, նշեց, որ եթե զավակները հրաժարվում են ծնողի խնամքն իրականացնելուց, ծնողին պահելուց, ապա ընտանեկան օրենսգրքով հստակ նախատեսված է, որ պետք է երեխաները վճարեն ալիմենտներ: Ալիմենտի չափը որոշում է դատարանը և կախված է խնամքի ծախսերից, զավակի ընտանեկան և գույքային դրությունից, եկամուտներից:

Նախարարի տեղակալը ընդգծեց, որ բարեփոխման հիմնական նպատակն այն է, որ միայն շուրջօրյա խնամք ցանկացող անձի կամ նրա բարեկամի ցանկությունը բավարար հիմք չի կարող հանդիսանալ, որ անձը հայտնվի շուրջօրյա խնամքի հաստատությունում: Հավելեց նաև, որ գլխավոր միտումն այն է, որ շուրջօրյա խնամքի հաստատություն պետք է ընդունվի այն մարդը, ով այլևս այլընտրանք չունի:

Խորհրդի անդամ Աննա Մնացականյանը հարց բարձրացրեց, որ արդյոք գործող օրենսդրությունը թույլ է տալիս շուրջօրյա խնամքի կարիք ունեցող անձին տրամադրվող ծառայությունների մատուցումը ծավալել մասնավոր դաշտում և պետական ոլորտի կողմից ապօրինությունների կանխարգելումն իրականացնել ճկուն մեխանիզմների մշակման և կիրառման շնորհիվ:

Թ. Ավետիսյանը պարզաբանեց, որ այդ ուղղությամբ ևս իրականացվում են բարեփոխումներ և ներկայացրեց, որ իրականացվել է խնամքի ծառայություններ մատուցող կազմակերպությունների հավաստագրման գործընթաց և կան մի շարք նմանատիպ կազմակերպություններ, որոնք չեն ընդգրկվել այդ ցանկում, քանի որ շուկան հնարավորություն չի ընձեռնում զարգացնել այդ դաշտը և պետական բյուջեից ֆինանսավորվող ծառայությունները փուլ առ փուլ մրցութային հիմունքներով հասնելու են դրան: Ներկայումս կան շուրջ տասը հասարակական կազմակերպություն, որոնք տարեցներին և հաշմանդամություն ունեցող երեխաներին մատուցում են նմանատիպ ծառայություններ, այդ թվում՝ շուրջօրյա հիմունքներով:

«Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ-ի նախագահ Նաիրա Առաքելյանը ներկայացրեց, որ իր կողմից ղեկավարած կազմակերպությունը փորձում է ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում աջակցող ցանցի քարտուղարության աշխատանքները միասնական կարգով իրականացնել, և միաժամանակ ապահովել ՍԾՏԳ-ների հետ համագործակցությունը: Սակայն առկա է համապատասխան բազաների հասանելիության ապահովման խնդիր, այսինքն՝ իրենց հասանելի չէ ԲՍՓՀ-ներից ստացված և հաշմանդամություն ունեցող անձանց տվյալները, որպեսզի կարողանան հաշմանդամություն ունեցող երեխաներին համապատասխան ծառայություն մատուցելու ընթացքում կիրառել պահանջվող տեղեկատվությունը: Մյուս խնդիրն այն է, որ Արտաշատ քաղաքում գործող "Հայկական

Կարիտաս" ՀԿ-ն և "Առաքելություն Հայաստան" ԲՀԿ-ն իրար հետ նույնիսկ տարեցին շուրջօրյա խնամք մատուցվող ծառայության տվյալ չեն կարողանում փոխանակել:

Նախարարը պարզաբանեց, որ տարիներ առաջ ևս անդրադարձել են այդ խնդրին և միաժամանակ նշեց, որ սոցիալական աշխատողների կողմից դեպքի տեղեկատվական համակարգի ձևավորման ներքո վերոնշյալ հարցին ամբողջությամբ լուծում է տրվելու, որը առցանց հասանելի է լինելու բոլորին, այդ թվում աջակցող ցանցի անդամ կազմակերպություններին, ովքեր ևս իրավասություն են ունենալու օգտվելու այդ համակարգից և համապատասխան տվյալները կիրառել այնպես, ինչպես սոցիալական աշխատողները:

Միաժամանակ նախարարը հավելեց, որ եթե կազմակերպությունն օրենքով սահմանված գործառույթ և ծրագիր է իրականացնում, ապա այդ դեպքում համապատասխան բազան հասանելի է լինում տվյալ կազմակերպությանը:

Նախարարի առաջին տեղակալ Ա. Պետրոսյանին հանձնարարեց բարձրացված հարցի հետ կապված նախատեսել քննարկում և առաջարկել լուծման հնարավոր ուղիներ:

Հարցի քննարկումն ավարտելուց հետո Նախագահի առաջարկով Խորհուրդը որոշեց ի գիտություն ընդունել նախարարի տեղակալ Թ. Ավետիսյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը:

Այնուհետև խոսքը փոխանցվեց նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժ. Սարգսյանին:

3. Զբաղվածության պետական ծրագրերի արդյունավետության բարձրացման, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատող մայրերին աշխատանքի վերադառնալու աջակցության մեխանիզմների ներդրման, գործազուրկի անմրցունակ ճանաչման դեպքերի հստակեցման և զբաղվածության ոլորտի մի շարք խնդիրների լուծմանն ուղղված ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում և քննարկում

Ժ. Սարգսյանն անդրադառնալով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծին /այսուհետ՝ Նախագիծ/, ներկայացրեց, որ այն ուղղված է զբաղվածության պետական ծրագրերի արդյունավետության բարձրացմանը, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատող մայրերին աշխատանքի վերադառնալու աջակցության մեխանիզմների ներդրմանը, գործազուրկի անմրցունակ ճանաչման դեպքերի հստակեցմանն ու զբաղվածության ոլորտի մի շարք խնդիրների լուծմանը:

Այնուհետև Ժ. Սարգսյանը ներկայացրեց, որ նախագծով նախատեսված է ծրագրերն իրականացնել ըստ կոնկրետ թիրախավորված շահառուների՝ մասնավորապես՝ աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագիրն իրականացնել միայն հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցության ծրագիրն՝ անապահով ընտանիքների անդամ հանդիսացող գործազուրկ անձանց համար:

Հստակեցվել է նաև այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրման ծրագրով գործազուրկին տրվող հավելավճարի չափը և վճարման տևողությունը, ինչպես նաև աշխատաշուկայում անմրցունակ անձանց գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրման ծրագրի շրջանակներում տրվող աջակցության չափն ու պայմանները:

Կարևոր փոփոխություն է նախատեսվում նաև սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ծրագրում ևս, միաժամանակ վերոնշյալ ծրագիրն նախատեսվում է իրականացնել ՀՀ լեռնային կամ բարձրլեռնային կամ սահմանամերձ բնակավայրերում, այն շահառուների շրջանում, ովքեր հանդիսանում են մինչև 3 հա գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ անհատույց օգտագործող: Ըստ առաջնահերթության դիտարկվելու են նրանք, ովքեր հանդիսանում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողի ընտանիքի անդամ:

Խորհրդի անդամ Ա. Մնացականյանը հարց բարձրացրեց ներակայացված Նախագծում «աշխատավարձի փոխհատուցման» բառերը «դրամական օգնության» բառերով փոխարինելու վերաբերյալ: Նշեց նաև, որ անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ փոփոխությունը մտածողություն է ձևավորում:

Ժ. Սարգսյանը պարզաբանեց, որ այդ ձևակերպումն ընդամենը տեխնիկական փոփոխություն է: Նշեց նաև, որ խոսքը կոնկրետ աշխատավարձին չի վերաբերվում, այլ՝ աջակցությանը, որպեսզի աշխատողը կարողանա օգտվել աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագրից:

Նախարարը հանձնարարեց հաշվի առնել խորհրդի անդամների կողմից ներկայացված առաջարկությունները և վերանայել Նախագծի այդ պարբերությունը:

4. Այլ հարցեր

Օրակարգի այլ հարցերին անդրադառնալով՝ «Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» Հայաստանյան ներկայացուցչության անդամ Գ. Գրիգորյանցը համառոտ տեղկատվություն տրամադրեց ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչների հետ համատեղ ՀՀ Լոռու մարզ կատարած իր այցի վերաբերյալ: Ներկայացրեց, որ ՀՀ Լոռու մարզում վերակազմակերպվող գիշերօթիկ հաստատությունների /այսուհետ՝ Հաստատություններ/ գործընթացի արդյունքում առաջացել է խնդիր կապված երեխաների տեղավորման, վերջիններիս մատուցվող բոլոր տեսակի ծառայությունների հետ: Հաստատությունում խնամք ստացող երեխաները վերամիավորվել են իրենց ընտանիքներին և չեն ստանում որևէ առարկայական կամ օժանդակ ծառայություն: Ինչի արդյունքում ընտանիքները դժգոհում են ստեղծված անորոշ վիճակի համար:

Նախարարի հարցին ի պատասխան Ա. Պետրոսյանը տեղեկացրեց, որ վերոնշյալ հարցի կապակցությամբ համապատասխան որոշման նախագիծ է ներկայացվել ՀՀ կառավարության աշխատակազմ: Նախարարը հանձնարարեց հետևողական լինելու՝ վերոնշյալ գործընթացն արագացնելու համար:

Նախագահողը նշեց, որ նախապես յուրաքանչյուր վերակազմակերպվող հաստատության համար հաստատվել է ճանապարհային քարտեզ: Նախքան գործընթացը սկսելը գործընկերների հետ պայմանավորվածություն էր ձեռք բերվել մինչև վերոնշյալ գործընթացի ավարտը ստեղծվելիք անցումային իրավիճակում ցուցաբերել համապատասխան աջակցություն:

Ամփոփելով հարցի քննարկումը՝ Նախագահողը հանձնարարեց առկա խնդրի ողջ էությունը հասկանալու և լուծման հնարավոր ուղիներ գտնելու համար իր մոտ նախատեսել քննարկում, քանի որ նախարարության համար խիստ կարևոր է ցանկացած երեխայի հետագա ճակատագիրը:

Նիստի ավարտին որոշում կայացվեց կազմել արձանագրության նախագիծ և Խորհրդի անդամների հետ համաձայնեցնելով այն ներկայացնել ստորագրման:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա.ԱՍԱՏՐՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝ **Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**